

այնքան բարձր՝ որ երկարահասակ մարդ մը իր ձեռքը բարձրացնելով կրնայ հասնիլ: Ուխտաւորները կը բարձրանան այս խորշին մօտ եւ ձեռքերնին անոր վրայ կը դնեն, հասկցնելու համար թէ նոյն պատին մէջ է այն ճշմարիտ քարը՝ որուն վրայ նստած է Քրիստոս երբ երկինք կը համբառնար(\*) . . .» (P. T. S. հատոր Ը. մասն Բ. էջ 487):

7. Յիսուսի արցունքները եւ Ձիթենեաց լեռան քափօրը. — «Եւ իբրեւ մերձեցաւ, տեսեալ զքաղաքն՝ ելաց ի վերայ նորա . . .» (Ղուկ. ԺԹ. 41): Յիսուս կը սիրէր Երուսաղէմը, և նախատեսելով անոր կործանումը լացաւ անոր վրայ: Աւանդութեան համաձայն, մատուռ մը հիմնարկուած է այն տեղը՝ ուր Յեսուսի արցունքները թափեցան՝ Ձիթենեաց լեռան զառիվայրին վրայ: Յետոյ նոյն տեղւոյն մատուռը վերածուած է Իսլամ աղօթատեղիի (Հան. էջ 273):

Դ. դարուն Ծաղկազարդի կիրակիին լեռնէն կ'իջնէր թափօր մը: Թափօրը կազմելու համար կը հաւաքուէին Ձեթենեաց լեռան եկեղեցին, յետոյ, Համբարձման սրբավայրին մէջ կը կարգացուէր Յիսուսի Երուսաղէմ մտնելուն վերաբերեալ ընթերցուածքը: Ապա հետիոտն ճամբայ կ'եղնէին մինչեւ լեռան ստորոտը: Ժողովուրդը որուն գլուխը կը կենար եպիսկոպոսը և կ'երգէր «Օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն Տեառն» ըսելով: Տղաքները ունէին արմաւենիի կամ ձիթենիի ճիւղեր, նոյն իսկ անոնք

(\*) Գրիգոր վրդ. Տաթևացիի աւանդութեանն առնելով կը գրէ թէ Քրիստոս ի՛նչ կերպարանով երկինք համբարձած է. «Մինչեւ ցամազ այնու կերպիւ որ նախ Բան զարչարանս, եւ կալեալ յամպոյն այնու՝ որով ի լեռնն այլակերպեցաւ» (Տար. 2. էջ 520):